Արձանագրություն N 2

ԱՄՈՀ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Ոսկետափ

18 հունվարի 2019թ.
ժամը 11:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
նախագահ Ս. Սաֆարյանը
անդամներ՝ Կ.Ղազարյանը, Վ. Կալանդարյանը, Ն. Հովհաննիսյան
քարտուղար՝ Լ. Սեյրանյանը

Հայտերի բացման մասին

---

(Ս. Սաֆարյան)

Ընդունել ի գիտություն, որ հայտ ներկայացրել է հետևյալ մասնակիցը.

| N | Մասնակցի | | |
|---|---|---|---|
| | Անվանումը | Հասցեն | ներկայացրած գնային առաջարկը/դրամ |
| 1 | «Վեստ Մենեջմենտ» ՍՊԸ | Հասցե՝ Արարատի մարզ, ք. Վեդի , Պուշկինի 4 | 6432000 /վեց միլիոն չորս հարյուր երեսուներկու հազար / ՀՀ դրամ |

Փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում հանձնաժողովը արձանագրեց, որ՝

- հայտ ներկայացրած մասնակցի ծրարը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան.

- բացված ծրարում առկա են հրավերով պահանջված փաստաթղթերը, որոնք կազմված են սահմանված պահանջներին համապատասխան:

Քննարկման արդյունքում հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքները (գնահատման թերթիկները կցվում են) հանձնաժողովը որոշեց՝

1. 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Վեստ Մենեջմենտ» ՍՊԸ-ին:
2. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված տվյալների ճշտման նպատակով ՀՀ Ֆինանսների Նախարարության կողմից «Վեստ Մենեջմենտ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների մասին եզրակացության ստացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 11:00-ին Արարատի մարզ, գ. Ոսկետափ, Հ. Աբելյան 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ Ս. Սաֆարյան

Անդամներ Կ. Ղազարյան

Վ.Կալանդարյան
Ն. Հովհաննիսյան

Քարտուղար՝ Լ.Սեյրանյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
շահերի բախման բացակայության մասին

գ.Ոսկետափ 18 հունվարի 2019թ.

ԱՄՈՀ-ԳՀԾՁԲ-19/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամներ Ս.Սաֆարյանս, Կ. Ղազարյանս, Վ.Կալանդարյանս, Ն.Հովհաննիսյանս և հանձնաժողովի քարտուղար Լ. Սեյրանյանս նշված ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո հայտարարում ենք, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունենք շահերի բախում:

Հանձնաժողովի

Նախագահ Ս. Սաֆարյան

Անդամներ Կ. Ղազարյան

Վ.Կալանդարյան
Ն. Հովհաննիսյան

Քարտուղար՝ Լ.Սեյրանյան